

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-19/1-1

ք. Երևան

«30».06.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոնտալ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովսեփյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն,

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 քանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = U_9 / (1 + X \cdot D_9)$, որտեղ՝

V_9 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

U_9 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է 1-ին չափաբաժնի մասոց 3000000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով 2000000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով 2000000 ՀՀ դրամ:

X -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է 1-ին չափաբաժնի մասոց 6864000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով 2605000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով 4313000 ՀՀ դրամ:

D_9 -ն բանաձևով սահմանված գործակից՝ 1-ին չափաբաժնի մասով 0.437, 2-րդ չափաբաժնի մասով 0.767, 3-րդ չափաբաժնի մասով 0.463

D -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

D -ն մատուցված ծառայության քանակն է:²⁰

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 36 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


7.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բազրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Կ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ



Ս. ՍԱԿՎԱՅԱՆ

«Մոնտայ» ՍՊԸ
ՀՀ Արարատ, գ. Հովտաշատ,
Բաղրամյանի 85տ.
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Կ 1570027106870100
ՀՎՀՀ 04426977
տնօրեն



Ա. ՀՈՎԱՍԵՓՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զ/Ը	Անվանում	
1	Ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ / Շարժական համալիրների սպասարկման և վերանորոգման ծառայություններ	
Այդ թվում՝		
Հ/Ը	Վերանորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների անվանումը	Զ/մ
1	Գիրոսկոպիկ սարքի ստուգում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
2	ՇՆՏ համալիրի ջրամատակարարման համակարգի ստուգում	հատ
3	ՇՆՏԳՍ համալիրի ջրամատակարարման համակարգի ստուգում	հատ
4	Հովացման համակարգի ստուգում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
5	ՇՆՏ համալիրի տաքացման համակարգի ստուգում	հատ
6	ՇՆՏԳՍ համալիրի տաքացման համակարգի ստուգում	հատ
7	Սանիտարական համակարգի ստուգում /ՇՆՏ համալիրի/	հատ
8	Վառելիքի մատակարարման համակարգի ստուգում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
9	ՇՆՏ համալիրի էլեկտրական համակարգի ստուգում	հատ
10	ՇՆՏԳՍ համալիրի էլեկտրական համակարգի ստուգում	հատ
11	Գիրոսկոպիկ թելի փոխարինում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
12	Գիրոսկոպիկ սարքի մարտկոցի փոխարինում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
13	Ղեկավարման վահանակի փոխարինում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
14	Ղեկավարման պլանշետի մարտկոցի փոխարինում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
15	Տախտմետրի համակցման մասի փոխարինում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
16	Գիրոսկոպիկ սարքի ճշգրտում /ՇՆՏԳՍ համալիրի/	հատ
17	Ջրի պոմպերի /124/ փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
18	ՇՆՏ համալիրի ջրամատակարարման համակարգի խողովակների փոխարինում	հատ
19	ՇՆՏԳՍ համալիրի ջրամատակարարման համակարգի խողովակների փոխարինում	հատ
20	Ջրամատակարարման համակարգի խողովակների կցորդների փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
21	ՇՆՏ համալիրի ջրամատակարարման համակարգի փականների փոխարինում	հատ

22	ՇՆՏԳՍ համալիրի ջրամատակարարման համակարգի փականների փոխարինում	հատ
23	ՇՆՏ համալիրի ջրի տարաների ջերմամեկուսացման փոխարինում	հատ
24	ՇՆՏԳՍ համալիրի ջրի տարաների ջերմամեկուսացման փոխարինում	հատ
25	Ջրատաքացման համակարգի փոխարինում /ՇՆՏ համալիրի/	հատ
26	Ջրի ծորակների փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
27	Կոնդիցիոներների ֆիլտրերի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
28	Webasto համակարգի հովացման խողովակների փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
29	Պատուհանների ցանցերի և ծածկերի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
30	Գեներատորի հովացման դրնակի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
31	Webasto շարժիչի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
32	Webasto համակարգի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
33	Ծխի ելքի խողովակների փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
34	Լոգարանի փոխարինում /ՇՆՏ համալիրի/	հատ
35	Լոգարանի ներկում /ՇՆՏ համալիրի/	հատ
36	Ցնցուղի փոխարինում /ՇՆՏ համալիրի/	հատ
37	Բիո զուգարանի փոխարինում /ՇՆՏ համալիրի/	հատ
38	Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
39	ՇՆՏ համալիրի Webasto համակարգի վառելիքի մատակարարման փոխարինում	հատ
40	ՇՆՏԳՍ համալիրի Webasto համակարգի վառելիքի մատակարարման փոխարինում	հատ
41	Webasto համակարգի վառելիքի բակի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
42	Գեներատորի բակի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
43	Էլեկտրական վարդակների (անջատիչների) փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
44	ՇՆՏ համալիրի էլեկտրական ղեկավարման համակարգի փոխարինում	հատ
45	ՇՆՏԳՍ համալիրի էլեկտրական ղեկավարման համակարգի փոխարինում	հատ
46	12-220Վ համակարգի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
47	Մարտկոցների վերալիցքավորման համակարգի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
48	Լեղ լույսերի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
49	Հողանցման համակարգի փոխարինում /ՇՆՏԳՍ և ՇՆՏ համալիրների/	հատ
Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի՝		2/մ
անվանումը	տեխնիկական բնութագիրը	

1	Գիրուկոպիկ թել	ՇՆՏԳՍ համալիրի համար գիրուկոպիկ թել՝ 200մմ երկարությամբ հատուկ պատրաստված համաձուլվածքից ժապավեն՝ հաստությունը 0,027մմ, խզման ճիգը մինչև 3 կգ	հատ
2	Գիրուկոպիկ սարքի մարտկոց	ՇՆՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի մարտկոց, լարում 24Վ, թողունակություն 6,5 Ա	հատ
3	Ղեկավարման վահանակ	ՇՆՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի ղեկավարման վահանակ, մուտքային լարումը 27 - 2,7 Վ հաստատուն, ելքային լարումը 36 Վ, եռաֆազ, 400Հց	հատ
4	Ղեկավարման պլանշետի մարտկոց	ՇՆՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի ղեկավարման պլանշետի մարտկոց, Lion Pocket L00X 700 տիպի կամ համարժեք, կոդը՝ 03101214	հատ
5	Տախտոմետրի համակցման սարք	ՇՆՏԳՍ համալիրի համար՝ GYROMAX AK-2M սարքի և էլեկտրոնային տախտոմետրի հուսալի ամրակցման սարք՝ 162մմ x 73մմx40մմ չափսի, ոչ մագնիսացող մետաղից, ամրակցումը կատարվում է ոչ մետաղական 22,5մմ երկարությամբ պտուտակներով	հատ
6	12Վ ջրի պոմպ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ 12 Վ, ջրի պոմպ, առնվազն՝ րոպետում 32 լիտր թողունակությամբ	հատ
7	Խողովակների կոմպլեկտ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ մետաղապլաստ խողովակ՝ 0,5 դյույմ հաստությամբ, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ
8	Խողովակների կցորդների կոմպլեկտ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ պլաստմասե և երկաթե անկյունակներ՝ 1/2 դյույմ հաստությամբ, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ
9	Փականներ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ 1/2 դյույմ լատունե փական, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ
10	Ջրի տարաների տերմոպլաստի կոմպլեկտ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ ջրի տարաների միասնական լրակազմ. 300 լ մետաղյա չժանգոտվող տարա-1 հատ, 100 լ պլաստմասե սննդային տարա -2 հատ	հատ
11	Ջրատաքացման համակարգ	ՇՆՏ համալիրի համար՝ 220Վ սնուցվող տեն, նախատեսված 300լ ջուր տաքացնելու համար	հատ
12	Ծորակներ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ մեկ փականով ջրի ծորակ՝ 1/2 դյույմ հաստությամբ, նախատեսված սառը ջրի համար	հատ
13	Ֆիլտրեր	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի վառելիքի ֆիլտր, օդի ֆիլտր	հատ
14	Webasto համակարգի հովացման բլոկ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ հովացման բլոկ՝ Webasto AT2000STC Thermo Top Z, 12 V TTZ	հատ

15	Պատուհանի ցանցեր, ծածկեր	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ պատուհանի ցանց՝ եվրո ցանց, 50×70 սմ, ծածկ՝ բոեգեմտե կտոր	հատ
16	Գեներատորի դուռ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ մետաղյա դուռ՝ 73×73սմ, 0,3մմ հաստության, շրջանակը՝ 3×3սմ անկյունակով	հատ
17	Webasto-ի շարժիչ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ 12V -ով բռնկվող Webasto AT2000STC-ի շարժիչ	հատ
18	Webasto համակարգ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի օդատաքացուցիչ՝ բենզինե շարժիչով և 12V բռնկման համակարգով	հատ
19	Ծխատար խողովակներ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի մետաղե խողովակ՝ 100 մմ երկարության	հատ
20	Լոգարանի տակդիր	ՇՆՏ համալիրի համար՝ լոգարանի տակդիր՝ 80 × 80 սմ չափսի, պատրաստված մետաղապլաստից	հատ
21	Ցնցուղ	ՇՆՏ համալիրի համար՝ ցնցուղ՝ ծորակին միացնելու հնարավորությամբ, նախատեսված տաք և սառը ջրի համար	հատ
22	Բիո զուգարան	ՇՆՏ համալիրի համար՝ բիոզուգարան՝ նախատեսված 1000 անգամ օգտագործման համար, ինքնամաքրման համակարգով	հատ
23	Գեներատորի վառելիքի մատակարարման համակարգ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ 4KW գեներատորի համար կարբյուրատոր՝ VM, ծավալը 110 սմ ³	հատ
24	Webasto համակարգի վառելիքի մատակարարման խողովակներ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի ռետինե կոշտ 4մմ-նոց խողովակ	հատ
25	Webasto համակարգի վառելիքի բակ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ Webasto AT2000STC-ի մետաղե բաք՝ 20 լ տարողության	հատ
26	Գեներատորի վառելիքի բակ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ 20լ տարողության մետաղե բաք, նախատեսված 4KW գեներատորի համար	հատ
27	Գեներատորի այրման մոմիկ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ գեներատորի այրման մոմիկ՝ 1-բեղիկանի	հատ
28	Վարդակներ, անջատիչներ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ 220V վարդակ՝ պաշտպանիչ կախարիչով, ջրակայուն, անջատիչ՝ 2 սեղմակով	հատ
29	Ղեկավարման բլոկ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ մետաղական արկղ՝ 25×35×20սմ չափսերի, բացվող դռնակով, կողպեկով, առնվազն 12 անջատիչներ տեղադրելու հնարավորությամբ	հատ

30	12-220Վ ինվերտոր /փոխակերպիչ/	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ հոսանքի փոխարկիչ (ինվերտոր) նախատեսված առնվազն 75Ա մարտկոցի համար, 12Վ-ը 220Վ-ի փոխարինող, հզորությունը՝ ոչ պակաս 3000Վտ	հատ
31	Մարտկոցի վերալիցքավորիչ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ "Վիմպել-57" կամ համարժեք, նախատեսված առնվազն 75Ա մարտկոցի վերալիցքավորման համար	հատ
32	Մարտկոց 75Ա	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ կապարաթթվային մարտկոց, առնվազն 75Ա հզորությամբ	հատ
33	Հողանցման լարեր և շտիբ կոմպլեկտ	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ բազմաթելային պղնձե լար՝ 3x6մմ, երկարությունը՝ առնվազն 20մ, ռետինե մեկուսիչ՝ 12մմ հաստությամբ, երկաթե ձող՝ 45սմ երկարությամբ	հատ
34	Լեդ լույսեր	ՇՆՏ և ՇՆՏԳՍ համալիրների համար՝ կլոր կամ քառակուսի լեդ լույսեր՝ 3W հզորությամբ, 220V հոսանքով աշխատելու համար	հատ

Ծանոթություն.

Հապավումները կարդալ.

ՇՆՏ համալիր՝ «Շարժական նավարկային տեղագրական համալիր»,

ՇՆՏԳՍ համալիր՝ «Շարժական նավարկային տեղագրակապակցիչ՝ գիրուկոպիկ սարքով» համալիր:

Իրականացվում է ՀՀ զինված ուժերում առկա երկու տեսակի շարժական համալիրների մասնագիտորեն կահավորված կոնգի բաղադրիչների վերանորոգում: Անսարքության դեպքում իրականացվում է համակարգերի, սարքերի բաղադրիչ մասերի աշխատանքի ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ մասի փոխարինում:

Իրականացված ծառայությունների համար պետք է տրվի երաշխիք՝ հանձնման-ընդունման օրվանից 12 ամիս ժամկետով:

Տեխնիկայի տեղափոխումը նորոգման (անհրաժեշտության դեպքում) և նորոգումից հետո ետ վերադարձը պետք է կազմակերպվի նորոգող կազմակերպության կողմից և միջոցներով՝ Երևան, Բագրևանդ-5 հասցեից:

Տեխնիկական բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Նորոգման ընթացքում փոխարինվող շինանյութերը, սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից:

Նորոգումն իրականացվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայության հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն:

Ծառայությունը համարվում է ընդունված (հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է) փորձարկումից և շահագործողի կողմից ընդունելուց հետո:

Չ/Հ	Անվանումը
2	Ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ / Գեոդեզիական սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ

Այդ թվում՝		
Հ/Հ	Վերանորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների անվանումը	Չ/Մ
1	Ճշտության ստուգում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի, Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
2	էլեկտրոնային տախետոմետրի աշխատունակության ստուգում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի/	հատ
3	Ընդունիչի ստուգում /Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
4	Ծրագրային ապահովման ստուգում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի, Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
5	Հավասարակշռման համակարգի փոխարինում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի, Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
6	Օպտիկական համակարգի փոխարինում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի/	հատ
7	Անդրադարձիչի օպտիկայի փոխարինում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի/	հատ
8	Կողմնորոշման օպտիկայի փոխարինում /Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի/	հատ
9	Ընդունիչ ալեհավաքի փոխարինում /Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
10	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի մայրական սալիկի (չափիչ սալիկի) փոխարինում	հատ
11	Trimble R8, Trimble R10 ընդունիչների մայրական սալիկի (չափիչ սալիկի) փոխարինում	հատ
12	GPS/GLONASS ընդունիչի փոխարինում /Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
13	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի մարտկոցների փոխարինում	հատ
14	Trimble R8, Trimble R10 ընդունիչների մարտկոցների փոխարինում	հատ
15	Ղեկավարման վահանակի մարտկոցի փոխարինում /Trimble R8, Trimble R10 ընդունիչների/	հատ
Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի՝		Չ/Մ

	անվանումը	տեխնիկական բնութագիրը	
1	Օպտիկական համակարգ	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի օպտիկական համակարգ՝ Nikon մանկնիշի, պարամետրերը. առավելագույն տեսանելիությունը՝ ոչ պակաս 5 կմ, նվազագույն տեսանելիությունը՝ ոչ ավելի 1,5 մետր: Խոշորացում՝ ոչ պակաս 30 անգամ	հատ
2	Հավասարակշռման համակարգ	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի, Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար հավասարակշռման համակարգ՝ սարքի հորիզոնականացման սահմանի ճշտությունը՝ $8 \pm 1^\circ$ (աստիճան)	հատ
3	Անդրադարձիչի օպտիկական համակարգ	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի անդրադարձիչների օպտիկական համակարգ՝ պրիզմայի տրամագիծը՝ 50-70 մմ, հանգույցային կետը՝ 0-ից մինչև -30մմ տիրույթում	հատ
4	Կողմնորոշման համակարգ	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի համար՝ յուրաքանչյուր մակնիշի տախետոմետրին համապատասխանող դիտման խողովակի համակարգ (блок зрительной трубы)՝ վիզիրով	հատ
5	Ընդունիչ ակտիվաբ	Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար ակտիվաբ՝ ընդունվող ալիքների նվազագույն քանակը՝ 600 ալիք	հատ
6	Մայրական սալիկ (չափիչ սալիկ)	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի, Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար՝ յուրաքանչյուր սարքին համապատասխանող մայրական սալիկ՝ 5" ճշտության չափումներ ապահովող	հատ
7	GPS/GLONASS ընդունիչ	Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար GPS/GLONASS ընդունիչ՝ L1C/A, L1C, L2C, L2E, L5L1C/A, L1P, L2C/A, L2P, L3 տեսակի ալիքներով աշխատող ընդունիչ՝ ռեֆերենց ցանցի հետ կոորդինատները ճշտելու հնարավորությամբ	հատ
8	Մարտկոց	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի համար վերալիցքավորվող Li-Ion մարտկոցային բլոկ, աշխատանքի ժամանակը նորմալ պայմաններում՝ ոչ պակաս 10 ժամ	հատ
9	Մարտկոց	Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար վերալիցքավորվող Li-Ion մարտկոցային բլոկ, աշխատանքի ժամանակը նորմալ պայմաններում՝ ոչ պակաս 10 ժամ	հատ
10	Ղեկավարման համակարգի մարտկոց	Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար ղեկավարման համակարգի մարտկոց՝ վերալիցքավորվող Li-Ion մարտկոցային բլոկ՝ 11.1Վ, 2600մԱժ, 28.9 Վժ, աշխատանքի ժամանակը՝ 34ժ նորմալ պայմաններում, ամբողջական լիցքավորումը՝ 3ժ	հատ

11	Շտատիվ	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի, Trimble R8, Trimble R10 ընդունիչների համար շտատիվ՝ հարթ հարթակով փայտյա եռոտանի NEDO200100, YGM180H կամ SJW30 մակնիշի կամ համարժեք. նվազագույն օգտակար բարձրությունը՝ ոչ պակաս 1,0մ, առավելագույն օգտակար բարձրությունը՝ ոչ պակաս 1,6մ	հատ
12	Անդրադար-ձիչի ձող	Trimble M3, Leica TS06 էլեկտրոնային տախետոմետրերի անդրադարձիչի ձող՝ միաչափ հարթաչափով, աշխատանքային բարձրությունը՝ 140-260սմ	հատ
13	Անդրադար-ձիչի ձող	Trimble R8, Trimble R10 ընդունիչների անդրադարձիչի ձող՝ միաչափ հարթաչափով, աշխատանքային բարձրությունը՝ 140-260սմ	հատ

Ծանոթություն

Գեոդեզիական սարքերը հիմնականում օգտագործվում են դաշտային պայմաններում՝ գեոդեզիական չափումներ և չափագրումներ կատարելիս: Սարքերը հանդիսանում են բարձր ճշգրտությամբ չափիչ սարքեր, նախատեսվում է իրականացնել ՀՀ զինված ուժերում առկա տարբեր մակնիշների՝ երկու տեսակի գեոդեզիական սարքերի վերանորոգում՝ էլեկտրոնային տախետոմետրերի և հսկման սարքերով գեոդեզիական ընդունիչների: Անսարքության դեպքում իրականացվում է սարքերի բաղադրիչ մասերի աշխատանքի ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ մասի փոխարինում կամ էլեկտրոնակայի կարգավորում:

Իրականացված ծառայությունների համար պետք է տրվի երաշխիք՝ հանձնման-ընդունման օրվանից 12 ամիս ժամկետով:

Տեխնիկայի տեղափոխումը նորոգման և նորոգումից հետո ետ վերադարձը պետք է կազմակերպվի նորոգող կազմակերպության կողմից և միջոցներով՝ Երևան, Բագրևանդ-5 հասցեից:

Տեխնիկական բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Նորոգման ընթացքում փոխարինվող նյութերը, սարքավորումները, մասերը (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից:

Նորոգումն իրականացվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայության հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն:

Ծառայությունը համարվում է ընդունված (հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է) փորձարկումից և շահագործողի կողմից ընդունելուց հետո:

2/Հ	Անվանումը	
3	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	
Այդ թվում՝		
Հ/Հ	Վերանորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների անվանումը	Չ/մ
1	Xerox WC 7425,7525,7830 սարքերի լազերային համակարգի ստուգում	հատ
2	Xerox 7740 WF սկանների լազերային համակարգի ստուգում	հատ

3	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի թանաքային համակարգի ստուգում	հատ
4	XEROX WF 7142 սարքի թանաքային համակարգի ստուգում	հատ
5	HP DesignJet Z6600 սարքի թանաքային համակարգի ստուգում	հատ
6	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի թղթաթուղու համակարգի ստուգում	հատ
7	XEROX WF 7142 սարքի թղթաթուղու համակարգի ստուգում	հատ
8	HP DesignJet Z6600 սարքի թղթաթուղու համակարգի ստուգում	հատ
9	Xerox 7740 WF սկանների թղթաթուղու համակարգի ստուգում	հատ
10	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի տպագրական համակարգի ստուգում	հատ
11	XEROX WF 7142 սարքի տպագրական համակարգի ստուգում	հատ
12	HP DesignJet Z6600 սարքի տպագրական համակարգի ստուգում	հատ
13	Xerox WC 7425,7525,7830, XEROX WF 7142 սարքերի ծրագրային ապահովման ստուգում	հատ
14	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի ծրագրային ապահովման ստուգում	հատ
15	HP DesignJet Z6600 սարքի, Xerox 7740 WF սկանների ծրագրային ապահովման ստուգում	հատ
16	Երևակման մասի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
17	Ժապավենի միջանկյալ տեղաշարժի համակարգի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
18	Ժապավենի մաքրման հանգույցի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
19	Անալոգային-թվային սենսորի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
20	Xerox WC 7425,7525,7830 սարքերի դիողային քանոնի փոխարինում	հատ
21	Xerox 7740 WF սկանների դիողային քանոնի փոխարինում	հատ
22	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի լազերային սենսորի մաքրում	հատ
23	HP DesignJet Z6600 սարքի լազերային սենսորի մաքրում	հատ
24	Xerox 7740 WF սկանների լազերային սենսորի մաքրում	հատ
25	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի թանաքային համակարգի մաքրում	հատ
26	HP DesignJet Z6600 սարքի թանաքային համակարգի մաքրում	հատ
27	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի թանաքային գլխիկների փոխարինում	հատ
28	HP DesignJet Z6600 սարքի թանաքային գլխիկների փոխարինում	հատ
29	Xerox WC 7425,7525,7830 սարքերի թղթի տրման անիվիկների (ռոլիկների) փոխարինում	հատ

30	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի թղթի տրման անիվիկների (ռոլիկների) փոխարինում	հատ
31	XEROX WF 7142 սարքի, Xerox 7740 WF սկանների թղթի տրման անիվիկների (ռոլիկների) փոխարինում	հատ
32	HP DesignJet Z6600 սարքի թղթի տրման անիվիկների (ռոլիկների) փոխարինում	հատ
33	Xerox WC 7425,7525,7830 սարքերի թղթի մատակարարման սենսորի փոխարինում	հատ
34	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի թղթի մատակարարման սենսորի փոխարինում	հատ
35	XEROX WF 7142 սարքի, Xerox 7740 WF սկանների թղթի մատակարարման սենսորի փոխարինում	հատ
36	HP DesignJet Z6600 սարքի թղթի մատակարարման սենսորի փոխարինում	հատ
37	ADF-ի (ինքնամատակա-րարման համակարգի) փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
38	ADF-ի անիվիկների (ռոլիկների) փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
39	Թղթի փաթաթման վալերի փոխարինում /HP DesignJet Z6600 սարքի/	հատ
40	Թղթի ելքի շարժիչի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
41	Առաջին շարժի վալի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
42	Հետադարձ վալի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
43	Տպագրական սալիկի (պլատայի) փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
44	Տպագրական թմբուկների փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
45	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի թանաքի շարժի ռետինե ժապավենի փոխարինում	հատ
46	HP DesignJet Z6600 սարքի թանաքի շարժի ռետինե ժապավենի փոխարինում	հատ
47	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի թանաքի շարժի տարայի փոխարինում	հատ
48	HP DesignJet Z6600 սարքի թանաքի շարժի տարայի փոխարինում	հատ
49	Xerox WC 7425,7525,7830 սարքերի հիշողության կոշտ սկավառակի փոխարինում	հատ
50	HP DesignJet 500/510, T790, T520, XEROX WF 7142 սարքերի հիշողության կոշտ սկավառակի փոխարինում	հատ
51	HP DesignJet Z6600 սարքի հիշողության կոշտ սկավառակի փոխարինում	հատ
52	Ժամային-քանակական էլեմենտի փոխարինում /Xerox WC 7425,7525,7830 սարքերի/	հատ
53	Xerox WC 7425,7525,7830, HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի ծրագրերի թարմացում	հատ

54	XEROX WF 7142 սարքի, Xerox 7740 WF սկանների ծրագրերի թարմացում	հատ	
55	HP DesignJet Z6600 սարքի ծրագրերի թարմացում	հատ	
Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի՝		Զ/մ	
	անվանումը		տեխնիկական բնութագիրը
1	Երևակման թաղանթ	Xerox WC 7425,7525,7830 սարքերի համար՝ երևակման թաղանթի հանգույց՝ կոդեր 848K08841, 848K08843, 848K08845 կամ 848K08846	հատ
2	Ժապավենի միջանկյալ տեղաշարժի համակարգ	Xerox WC 7425,7525 սարքերի համար՝ ժապավենի տեղաշարժի հանգույց՝ կոդեր 604K68530, 604K68531, 604K68532 կամ համարժեք	հատ
3	Ժապավենի միջանկյալ տեղաշարժի համակարգ	Xerox WC 7830 սարքի համար՝ ժապավենի տեղաշարժի հանգույց՝ կոդեր 604K68533, 604K68534, 604K68535, 604K68536 կամ համարժեք	հատ
4	Ժապավենի մաքրման հանգույց	Xerox WC 7425 սարքի համար՝ կոդ 001R00600, Xerox WC 7525,7830 սարքերի համար՝ կոդ 001R00613	հատ
5	Դիողային քանոն	Լուսադիողային քանոն, Xerox WC 7425 սարքի համար՝ կոդ 130K72654, Xerox WC 7525, 7830 սարքերի համար՝ կոդեր 130K78680, 130K78681, 130K78690 կամ 130K78591	հատ
6	Անալոգային-թվային սենսոր	Xerox WC 7425,7525,7830 սարքերի մաս՝ թղթի որոշման սենսոր, կոդ՝ 130K64150	հատ
7	Թանաքային գլխիկներ	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար՝ թանաքային գլխիկներ՝ կոդեր C4810A, C4811A, C4812A կամ C4813A (ըստ թանաքի գույնի)	հատ
8	Թանաքային գլխիկներ	HP DesignJet Z6600 սարքի համար՝ թանաքային գլխիկներ՝ կոդեր CE018A, C1Q20A կամ CE020A (ըստ թանաքի գույնի)	հատ
9	Թանաքի մատակարարման խողովակներ	HP DesignJet 500/510, T790, T520 սարքերի համար՝ թանաքի մատակարարման խողովակներ, կոդեր՝ C7770-60251, C7770-60286 կամ համարժեք՝ համապատասխանող ըստ սարքի մակնիշի	հատ

10	Թանաքի մատակարարման խողովակներ	HP DesignJet Z6600 սարքի համար՝ թանաքի մատակարարման խողովակներ, կոդեր՝ CH955-67054 կամ համարժեք	հատ
